«Հէնց որ, երկար ճիգերից յետոյ, մենք ցրում ենք այդ տրամադրութիւնը, զօրքերի հրամանատարը հեռանում է ու տեղը գալիս է նորը, եւ կառավարութիւնը ստիպուած է նորից կրկնել միեւնոյն աշխատանքը։ Անգլիացիների վեց ամսուան գոյութեան մէջ մեր երկրում փոխուեցին երեք զօրավարներ. զօր. Ուօկկերին փոխարինեց զօր. Թոմսընը, իսկ վերջինիս տեղը համեմատաբար դեռ նոր եկաւ զօր. Քոբին»։

Ու Գեղեշկորին հանդամանօրէն պարզում է Վրաստանի քաղաքականութիւնը.

«Մենք շատ լաւ հասկանում ենք, որ առանց հզօր Դաշնակցի Վրաստանի համար դժուար կը լինի ձեռք բերել իր անկախութեան ճանաչումը, որովհետեւ ոչ միայն մենք, այլ եւ Եւրոպայի աւելի մեծ եւ դրամապէս աւելի ապահովուած պետութիւններ չեն կարող այժմ գոյութիւն ունենալ առանց արտաքին օժանդակութեան։ Վրաստանի կառավարութիւնը գիտակցում է, որ նա պէտք է յենուի որեւէ ամուր պետական մարմնի վրայ, եւ այդ գիտակցութիւնը թելադրեց մեզ որոշ օրիենտացիա Անգլիայի վրայ։

«Ի հարկէ, մենք գիտենք, որ նման օգնութիւնը Միացեալ Թագաւորութեան կողմից պէտք է փոխհատուցուի այս կամ այն ուղղութեամբ։ Դժբախտաբար, մինչեւ այժմ մենք չենք կարողանում պատասխան ստանալ այս մեզ համար այնքա՜ն կարեւոր հարցին։

«Ես ամփոփում եմ իմ ասածը. ստեղծուած հանդամանքներում Վրաստանը չի կարող մինակ, առանց օժանդակութեան անցնել փորձութեանց բովից. նա օգնութիւն է խնդրում Անգլիայից եւ կամենում է գիտենալ, փոխարէն ի՞նչ է ուզելու Անգլիան։

«Իմ յայտնած դրութիւնը կառավարական խորհրդակցութեան արդիւնք է, եւ պէտք է ասել, որ այս հարցի նկատմամբ մեր մէջ չկար եւ ոչ մի տարակարծութիւն։ Ներկայ վայրկեանը բարդանում է բրիտանական զինուած ուժերի հեռացումով Անդրկովկասից։ Եւ այդ փաստը յուզեց Վրաստանի հանրային կարծիքը։

«Ի հարկէ, մենք վախենում ենք ոչ թէ մեզ համար, որովհետեւ Վրաստանը սեփական ուժերով կարող է ապահովել կարգը երկրի ներսում եւ պաշտպանել իրեն, բայց, բարեբախտաբար թէ դժբախտաբար, մենք խիստ սերտ կապերով կապուած ենք մեր հարեւանների հետ։ Աւելացրէք դրան եւ այն, որ Թուրքերը կեցած են Էրզրումում։ Բաւական է, որ զսպող տարր հանդիսացող անգլիացիները հեռանան, որ անմիջապէս բարդութիւններ ստեղծուին հարաւից ու հիւսիսից»։ Այդ պատճառով վրաց կառավարութիւնը խնդրել է, որ անգլիական զօրամասերը մնան Անդրկովկասում։ Գեղեշկորին, իր հերթին, խնդրում է Ուօրտրոպին, որ «անգլիական զօրքերը պահուին դէթ Հայաստանում»։

Ինչո՞ւ միայն Հայաստանում — այդ գիտեն միայն վրաց ազգայնական նախարարները։

Ապա Գեղեշկորին դնում է Բաթումը Վրաստանին յանձնելու եւ դրամական օգնութիւն հասցնելու հարցը.—

«Մեր ելեւմուտքը այնպէս է խախտած, որ եթէ ամենակարճ ժամանակում օգնութիւն չստանանք, ուշացած օժանդակութիւնը կարող է դառնալ անպտուղ»։

«Վրաստանի կառավարութիւնը,— վերջացնում է նա,— հաստատ հաւատացած է, որ կը գտնէ շփման կէտեր եւ ընդհանուր լեզու Անգլիայի հետ։ Վրաստանը, որ հանդիսանում է ճանապարհը դէպի Առաջաւոր Ասիան, պէտք է հետաքրքրէ Մեծ Բրիտանիային, եւ վերջինս անպայման ձեռք կը մեկնէ վրաց ժողովուրդին, որը դարերի միջով անց է կացրել մշակոյթի եւ քաղաքակրթութեան ջահը... Գալով Բաթումի շրջանին եւ Բաթում քաղաքին՝ մենք արդէն բանակցել ենք բրիտանական հրամանատարութեան Թիֆլիսի ներկայացուցչի միջոցով ձեր կառավարութեան հետ։ Իմ ընկերը կը հաղորդէ ձեզ մեր առաջարկութեանց մանրամասնութիւնները»։

Եւ արտաքին գործոց նախարարի օգնական Սարախտարաշվիլին, որ ներկայ է լինում խօսակցութեան, յայտարարում է.

«Մեր առաջարկներն այսպէս են. Վրաստանին յանձնում են Բաթումի շրջանը, որի մէջ նա կազմակերպում է իշխանութիւնը՝ յենուելով ժողովրդական լայն զանգուածների վրայ։ Քաղաքային վարչութիւնը կազմակերպում է